

---

---

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐԱԿԱԶՄ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ  
ՏԵՐՄԻՆԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ»-ՈՒՄ (1901–1920 թթ.)

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

Վիեննայի Մխիթարյան միաբանության պարբերական հրատարակած «Հանդես ամսօրյա»-ում 1901–1920 թթ. տպագրված հոդվածների բովանդակային դասակարգումը հնարավորություն է տալիս ներկայացնել հոդվածներում գործածված նորակազմ տերմինների բաշխումն ըստ ուսումնասիրության ուղղությունների, և դրանց հարաբերակցությամբ ցույց տալ տերմինակազմության հիմնական ազդակները:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հանդեսում տպագրվել են լեզվաբանական կամ այդպիսի նյութ պարունակող 9 հոդվածաշար և 58 հոդված: Դրանք ուսումնասիրության մեթոդի և բովանդակային հիմքով կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝ ա. 5 հոդվածաշար և 31 հոդված՝ հիմնականում համեմատական բնույթի՝ ստուգաբանությունների, հայերենի լեզվական առնչությունների, փոխառության աղբյուրների մասին, բ. 3 հոդվածաշար և 13 հոդված նկարագրական բովանդակությամբ՝ հիմնականում առանձին բարբառների հնչյունաբանության, բառապաշարի, քերականության մասին, գ. գրախոսական. «ուղղիչ և հառաջացուցիչ» բայց երբեմն նաև ավելորդ հրատարակությանց համար՝ կասեցուցիչ», խրախուսական և քննադատական 1 հոդվածաշար և 14 հոդված:

Հոդվածների ա խումբ: Պատմահամեմատական լեզվաբանության տերմինները, որ առավելապես գործածված են այս խմբում, պայմանավորված հնչյունների ու ձևայինների համեմատական ուսումնասիրությամբ՝ հիմնականում առնչվում են հնչյունաբանությանն ու բառագիտությանը, սակավ՝ նաև ձևաբանությանը:

ա. Հնչյունաբանական տերմիններ: Միջձայնաւորակա (intervocalique)<sup>1</sup> հոմանիշ են՝ միջամխութիւն (միայնաւորամիջի փակում), միջամուխ (միջնաձայնաւոր) կոկորդական (1914, 8, 514) տերմինները, որոնց կից տրված բնագրում՝ միջամխութիւն =intervocalische, միջամուխ = intervocalique (= միջին ձայնավոր – միջին կազմավորման ձայնավորների անվանումը հնդեվրոպական լեզվաբանության վաղ շրջանում)<sup>2</sup>, գրափոխութիւն (1907, 4, 120, օր՝ «ռուս. saloma «յարդ»

---

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1914, № 6, էջ 340 (այսուհետև՝ ՀԱ. թվականը, համարը, էջը կնշվեն տեքստում):

<sup>2</sup> Հ. Զ. Պ ե տ ր ն ս յ ա ն, Ս. Ս. Գ ա լ ս տ յ ա ն, Թ. Ա. Ղ ա ր ա գ յ յ ա ն. Լեզվաբանական բառարան (այսուհետև՝ ԼԲ), Երևան, 1975, էջ 218:

ծագած ձևերէս *kolma-koalma*»), տառատեղափոխութիւն (1906,5,130, = տերմինն անվանում է արևմտյան լեզուների մէջ *h.-ե. tst-ts* և *satəm* լեզուների մէջ *tst-ss* անցումները), շարժական հնչյուն (1903,7,221, *օր. հայ. խորիս և սլ. skora* բառերը համարմատ են՝ շարժական *s-ի* տարբերությամբ), կազմութեան ձայնաւոր (kompositionsvokal) (1904,6,185, *օր. gos-shh-ā-gen-os*) և այլն:

բ. *Բառագիտական տերմիններ*: Կրկնակազմ բառ (1906,1,20, = բառ, որ կարող է ծագած լինել *h.-ե. մոտ իմաստով երկու նախաձևերից*), խառնուած բառ (1905,8,253, = երբ բառը կազմված է բնիկ ու փոխառյալ բաղադրիչներով, *ԼԲ՝ խառնածին բառ*), նորոգուած բառ (neuerung) (1905,12,381, = համեմատական մեթոդով վերականգնված բառ), արմատընդարձակող ձև (1903,12,381, = արմատի ընդարձակ ձև. *հմմտ. bu* և *bu-d, bu-k*), նախախնամի (1905,9,278, = նույն նախաձևից ծագած) և այլն:

գ. *Ձևաբանական տերմիններ*: Ներկայի ձևակցուցիչ (1908,5,154 = ժամանակաձևի կազմիչ, *ԼԲ՝ ձևակերտ, ձևավորիչ*), վերակցական դերանուն (1906,10,290, = բնորոշում է դերանվան կազմությունը. *ըստ «Հանդես ամսօրյալի» t* հոդը հինսլ. *tā* դերանվան մէջ վերակցված ձև է), արգելող բացասութիւն (*la negation prohibitive*) (1908,8,247, = արգելական մասնիկ) և այլն:

Հոդվածների բ խումբ: *Բարբառների հնչյունաբանական, բառագիտական և ձևաբանական նկարագրություններն ու վերլուծությունները ձևավորել են երկրորդ խմբի հոդվածների տերմինային միջավայրը*:

ա. *Հնչյունաբանական տերմիններ*: Որևէ բարբառի ուսումնասիրություն հանգեցրել է հենց այդ բարբառին բնորոշ տերմինների գործածության: *Օր.՝ Արարկիլի բարբառի գ, թ, լ, մ, ն, ս, ց, ք բարդ արտաբերումով հնչյունները «թավ բաղաձայն անվանեցինք և զանոնք պարզ բաղաձայններեն որոշեցինք անոնց տակը կետ մը դնելով»:* (1901,2,41), *իսկ ըստ ԼԲ-ի՝ թավ են միայն շնչեղ խուլերը: Նույն բարբառի հագագային հնչյունները դասակարգված են զօրաւորի և մեղմագոյնի (1901,2,40), ըստ ԼԲ-ի՝ գորավոր բաղաձայնները հատուկ են սեմական լեզուներին: Հնչյունների դասակարգման հատկանիշների ինքնուրույն անվանումներ են գործիական կամ անդամական և արտասանական (1901,2,40) տերմինները և այլն:*

բ. *Բառագիտական տերմիններ*: Աւելորդադրութիւն (1902,1,22, *օր. տունմուն, շոգ-մոգ*), յարաբերական բառեր (1902,6,177, = բաղադրյալ բառեր, որոնց բաղադրիչները միմյանց կցված են կա՛մ անփոփոխ հարաբերությամբ (*օր.՝ աներձագ, երեցկին*), կա՛մ հոլովված (*օր.՝ իշուկոնակ, շաներես*). *ըստ ԼԲ-ի՝ նախադասություններ կապակցող դերանուններ*), մերձաձայն բառ (1908,10,316, = հարանուն, *օր.՝ «տուն ու տեղ», «նեղ արեք ու տեղ արեք», «խաղք խայտառակ արին»*) և այլն:

գ. *Ձևաբանական տերմիններ*: Պատահական հոլով (1902,7,220, «Պատահական հոլով կ'անվանենք այն ձևերը, որոնք բարբառիս մէջ աստ անդ կը պատահին սովորական դարձած ձևերու հետ միասին. *աչքեր, աչք, աչվրներ, աչեր»*, անհաստատ հոլովում (1902,7,220, = այս հոլովմանն են պատկանում այն բառերը, որոնք կայուն հոլովում չունեն և կարող են պատկանել երկու հոլովման,

օր.՝ *դար-դարի, դարու, այգի-այգիի, այգու*), ոճաձևի բայեր (*1903,7,219*, = *դարձվածքի բաղադրիչ բայեր*, օր.՝ *էրես առնալ, հոգի առնալ*), այլազան բայեր (*1903,7,220*, = *օտարաբանություն*, օր.՝ *իկիտնալ-գորանալ, խարճել-ծախսել*) և այլն:

Այս խմբի հոդվածներում ևս ուսումնասիրությունները երբեմն կատարված են «համեմատական լեզվաբանության առաջնորդության տակ»<sup>3</sup>, և կան տեսական հարցերի լեզվաբանական հայեցակետով ընդհանրացումներ՝ համապատասխան տերմինների կիրառությամբ, որոնցից նորակազմ են՝ լեզուաց հոլովոյթ (evolution) (*1912,1,15*), հայրենի հայերեն (գրաբար), մայրենի հայերեն (աշխարհաբար) (*1912,1,20*)<sup>4</sup>:

Հոդվածների գ խումբ: Նշված խմբի գրախոսական հոդվածները թեմատիկ սահմանափակում չունեն, և դրանց բնորոշ է լեզվի տարբեր բաժինների առնչվող տերմինների գործածություններ: Սակայն այս հոդվածները, գնահատողական բնույթով պայմանավորված, չունեն նախորդների գիտականությունը և հաճախ պարունակում են հրապարակախոսական ոճի տարրեր, ինչն էլ հանգեցրել է տերմինային նորակազմությունների սակավության:

ա. Հնչյունաբանական տերմիններ: Չայնական յօրինումներ (système phonétique) (*1910,8,231*, ԼԲ՝ *ձայնավորական համակարգ*), միջատառ (*1904,10-11,335*), միջաձայն (*1902,1,17*), եւ միատառ երկձայն (*1903,12,382*) և այլն:

բ. Բառագիտական տերմիններ: Բառերուս որդեգրական-ազգակցութեան քննություն (*1907,3,95*), լիովին վանկ (*1908,3,87*), լեցուն վանկ (*1888,10,167*, ԼԲ՝ *լի վանկ*), հնաձեւություն (archaisme) (*1902,6,169*) և այլն:

Նոր հասկացություններն ընդհանրապես արտահայտվում են նկարագրության միջոցով, որի լիարժեք կառույցը բաղադրյալն է՝ բառակապակցականը<sup>5</sup>: Հանդեսի նորակազմ տերմիններին ևս բնորոշ է բառակապակցական կառույցը՝ երկանդամության գերակշռությամբ. լեզուածայր ձայնավոր (*1905,11,345*, = *առաջնալեզվային ձայնավոր*), խաղողկային (uvulaire) բաղաձայն (*1907,3,92*, ԼԲ՝ *լեզվակային բաղաձայն*), կոկորդային բացականեր (divergent) (*1912,12,709*, = *կոկորդային ձայնակազմությամբ չձևավորվող հնչյուններ*) և այլն: Երեք բաղադրիչով բառակապակցական նորակազմ տերմինի մեկ օրինակ կա՝ լեզուացեղերու նախնական տիպար (urtypus) (*1901,5-6,179*):

Բառաբարդումը ևս հանդեսում տերմինների կազմության գործուն եղանակ է և դրսևորված է բաղադրիչների ինչպես բարդ, այնպես էլ բարդ ածանցավոր հարաբերությամբ: Ածանցումը կիրառված է բարդ ածանցավոր կառույցներում՝ բացառությամբ մի քանի նախաածանցավոր կազմությունների. նախի-

<sup>3</sup> Դ ր . Ֆ ր . Ֆ ո ն ՝ Գ ր է լ ի ց - Գ ր ա յ Ֆ է ն հ ո ր ս տ . Հայ-թաթարերենը Լեհաստանի մեջ. - ՀՄ, 1912,12,706:

<sup>4</sup> Դասակարգումը կատարված է Մ. Մյուլլերի օրինակով, որը հնչյունական ու քերականական ընդհանրացումներով լեզուները տարանջատում էր առնացի և կանացի ճյուղերի, տե՛ս Մ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն . Հին դասական հայերենը և արդի գավառաբարբառները. - ՀՄ, 1912, №1, էջ 20:

<sup>5</sup> Տե՛ս Լ. Ղ ա գ ա ն չ յ ա ն . Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, Լեզվի և ոճի հարցեր, №4, Երևան, 1977, էջ 303:

մաստ (1908,5,153), նախաձայն (1905,8,253, = նախալեզվի հնչյուն, ԼԲ՝ սկզբնահնչյուն):

ա. *Բարդ տերմիններ*: Շուտաձեռ (1907,10,303), նշանաձայն (1901,2,37, ԼԲ՝ նշանագիր), արմատանուն (1908,7,213), արմատաձեռ (1903,7,221), արմատավերջ (1908,7,213), արմատնդարձ (1907,10,304) և այլն:

բ. *Բարդ ածանցավոր տերմիններ*: Վերջաձանցավոր տերմինները գերազանցապես ածանցված են ութին-ով. կրկնավերջաւորութիւն (1905,10,318, = բաղադրյալ ածանց), ներքնակազմութիւն (1914,8,512), նմաներանգութիւն (1906,1,21, «...բաղաձայնից միջնորդութեամբ յառաջ եկող նմանաձայնութիւն մը»), կրկնաձեռակցութիւն (1907,6,184, օր. գաղփադրում), այլակերտութիւն (1907,1,16), արմատափոխութիւն (1906,11,343), նմանափոխութիւն (1905,1,4) և այլն:

*Բաղադրիչների համադասությամբ բարդ-բաղադրյալ<sup>6</sup> տերմիններն ընդհանրապես սակավաթիվ են: Հանդեսում կա այդպիսի մեկ օրինակ. ձայնաւոր-բաղաձայն (1912,12,711, = ձայնորդ):*

*Նոր պարզ տերմին հանդիպում է մեկ կիրառությամբ՝ առաջացած բարդ տերմինի կրճատման հետևանքով: Հմմտ. «գաւառական լեզուի մէջ խ/հ փոխ մը» (1907,6,182) – «ոյ/ու փոխանակութիւն» (1906,3,69):*

*Հանդեսի տերմինագործածության հիմնական առանձնահատկությունները ոչ նորմավորված տերմինագործածության հետևանք են: Նկատելի են տերմինի՝ բառային հատկանիշներով կիրառություններ, հաճախ նաև՝ տերմին-բառ նույնություն: Տերմինագործածության այս ազատության դրսևորումներից են տերմինային հոմանշությունն ու գուգաձևությունը:*

1. *Տերմինային հոմանիշներ*. նորածագ կազմութիւն (1906,9,281)- նորաձեռութիւն (1906,9,281) – նորընկալ կամ նորագիւտ տարր (1909,8,252), արգասաբեր -ի (1906,9,282) – արդյունաբեր -րո- (1906,4,109), ստորաբարբառ (1912,10,602) – ենթաբարբառ (1912,10,609), վերջաձայն (1905,5,157) – վերջատառ (1905,5,157) և այլն:

*Անհետևողականություն է նկատելի օտար համարժեքի նշումով տերմինների կիրառություններում՝ Միննույն աղբյուրից թարգմանությունները, 1887–1900 թթ. և 1901–1920 թթ. համեմատությամբ, հաճախ տարբերվում են՝ առաջացնելով թարգմանական տարբերակներ՝ հոմանշային հարաբերությամբ. սկզբնափակ բաղաձայններ (affricatae) (1905,1,1) – ճչական (affricata) ձայներ (1900,1,14), եզրներ (termini) (1913,12,723) – ուսումնական բացատրութիւն (terme) (1889,2,27), «դասաւորական (syntaxal) անբաւ խաղեր» (1913,12,721) – «համաձայնական (syntaxique) ձեռ» (1898,3,79), ձայնաբախութիւն (hyatus) (1910,8,230) – ձայնաւորաց հանդիպումն (hiatus) (1894,5,156), յետադիր (suffixes) մասնիկ (1902,2,49) – հոլովական մասնիկի (suffix) (1892,6,164), անձայն e*

<sup>6</sup> Բարդ-բաղադրյալ տերմինը գործածել է Լ. Ղազանյանը. տե՛ս նույն տեղում, էջ 298:

<sup>7</sup> Կից բացատրություններով գործածությունները հատուկ են եղել դեռ XIX դարի վերջին տասնամյակների աշխարհագրորդներին. տե՛ս Վ. Հ ա մ բ ա ռ ձ ու մ յ ա ն. Գրաբարի գործածությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ., Երևան, 1990, էջ 61:

(emulette) (1901,2,37) – համր տառեր (mutae) (1894,5,157), ձևախօսութիւն (morphologie) (1902,1,19) – կերպախօսութիւն (morphologie) (1896,2,47) և այլն:

2. *Ջուգաձևությունները հիմնականում դրսևորված են՝ ա. բառակապակցական և բառաբարդված տարբերակների առկայությամբ. նախանշանակութիւն (1904,10-11,335) – նախաւոր նշանակութիւն (1906,5,132), արմատական ձայնաւոր (1903,12,381) – արմատաձայնաւոր (1903,12,381), ձայնական օրէնք (1907,8,249) – ձայնաօրէնք (1907,8,249) – ձայնաւորաօրէնք (1907,8,250) և այլն, բ. հոդի կամ հոդակապի տարբերությամբ. միջնատառ (1905,1,3) – միջատառ (1905,5,158), նախաարմատ (1906,2,57) – նախարմատ (1906,11,346) և այլն, գ. միության գծիկի ոչ հետևողական գործածությամբ. արմատընդարձակող ձեւ (1903,12,381) – արմատ-ընդարձակող ձեւ (1904,6,185), նախ-հայկական լեզու (1907,6,188) – նախհայկական լեզու (1907,6,189), արմատաձեւ (1909,5,160) – արմատ-ձեւ (1912,12,710), միջին կոկորդային-պայթուցիկ (1901,8, 235) – կոկորդային միջին պայթուցիկ (1901,8,236) և այլն:*

*Այսպիսով՝ 1901–1920 թթ. «Հանդես ամսօրյայում» հայերենի ուսումնասիրության երկու հիմնական տեսանկյունը՝ համեմատական և նկարագրական, դարձել են տերմինակազմության գլխավոր ազդակներ: Տերմինագործածության չկայունացած նորմաների պայմաններում ձևավորվել են տերմինների ձևախմբային խմբեր, իսկ միակենտրոն կարգավորման բացակայությունը հանգեցրել է հեղինակային նորակազմությունների, որոնք հիմնականում ունեն կիրառական սահմանափակում. կա մ չեն գործածվում այլ հոդվածագիրների կողմից, կա մ ղիպվածային են՝ առանց կիրառության այլ օրինակների:*

ЛИНГВИСТИЧЕСКИЕ НОВООБРАЗОВАННЫЕ ТЕРМИНЫ И ОСОБЕННОСТИ ИХ ИСПОЛЬЗОВАНИЯ В «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԿԱ»

(1901-1920 гг.)

ТИГРАН СИРУНЯН

Р е з ю м е

Два основных аспекта исследования армянского языка «Հանդես ամսօրյա» (1901–1920) – сравнительная и описательная – стали главными импульсами создания терминов. В условиях использования не утвердившихся терминов сформировались формально-семантические группы, а отсутствие моноцентричного урегулирования привело к созданию авторских неологизмов, которые ограничены в применении, т. е. они или не используются другими, или случайны – без других примеров их использований.

---

THE NEWLY - FORMED LINGUISTIC TERMS AND THE PECULIARITIES OF THEIR  
USAGE IN «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ» (1901–1920)

*TIGRAN SIRUNYAN*

S u m m a r y

Two main points of view of the study of the Armenian language of «*Հանդես ամսօրյա*» (1901–1920) – comparative and descriptive – have become the principal impulses of the formation of the terms. In the state of non-stabilized norms of usage of the terms there have been formed formulated semantic groups, meanwhile the absence of monocentral regulation has led to the creation of neologisms by the author, that are limited in usage, i.e. either aren't used by others, or are accidental without examples of other usage.